ԱՆԼՌԵԼԻ «ՄՈՍԿՎԻ ԴՈՂԱՆՋԵՐԸ»

Կարդացեք, տարածեցեք

ՄՈՍԿՎԻ ԴՈՂԱՆՋՆԵՐ

ազատից եղեք

Մայր ԴԱՆԻԵԼՅԱՆ

Շարունակվում է լույս տեսնել Ադրբեջանի կողմից բռնազավթված ԼՂՀ Շահումյանի շրջանի հասարակական անվճար թերթը՝ «Մոսկվի դողանջները»: Վերջին՝ հուլիսյան համարում զետեղված նյութերը պատմում են շահումյանցիների վիճակի մասին, որոնք ապաստանել են Ղարաբաղի մյուս շրջաններում, Հայաստանում եւ այլ վայրերում: Հրապարակված են նրանց նամակները Սարատովից, Կալինինգրադից, Օրենբուրգից, Մոսկվայից եւ այլ վայրերից, շատերը փնտրում են իրենց հարազատներին, ընկերներին, հարեւաններին, որոնց կորցրել են փախուստի ճամփաներին:

Թերթի խմբագիր Կիմ Ղահրամանյանը «Ազգովի պաշտպանել Շահումյանի դատը» ընդարձակ հոդվածում պատմում է Երեւանում եւ նրա մերձակա շրջաններում ապաստանած շահումյանցիների բողոքի ցույցի եւ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի դեսպանատներում բռնագաղթվածների ներկայացուցիչների ունեցած հանդիպումների մասին:

Թերթը հրապարակել է Հյուսիսային Արցախից բռնի տեղահանված բնակչության իրավունքների պաշտպանության նախաձեռնող խմբի դիմումը Մինսկի խմբի համանախագահներ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի կառավարություններին: Խումբը պահանջում է խաղաղական բոլոր միջոցները գործի դնելով ազատագրել Ադրբեջանի կողմից օկուպացված հողերը, հայրենիք վերադառնալուց հետո ապահովել իրենց անվտանգությունը, օգնել վերականգնելու ավերված տնտեսությունն ու կենցաղը: Նախաձեռնող խումբը այդ պահանջները առաջադրում է ոչ միայն Շահումյանի շրջանի, այլեւ Ադրբեջանի Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի, Շամախու եւ այլ շրջանների հարյուրավոր հայկական գյուղերից բռնագաղթվածների անունից: Նրանք հույս ունեն, որ իրենց պահանջները աշխարհին լսելի կդարձնեն հայ դիվանագետները, խաղաղական գործիչները եւ զանգվածային լրատվության միջոցները: